Փառք Աստծուն, Շնորհաց աղբյուրին,
Փառք տվեք, ո՛վ բոլոր գործեր Իր ձեռքի,
Փառք տվեք, բոլոր սուրբեր երկնային,
Փառք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն:

***
Փառաբանությամբ երգեցե՛ք մեր Թագավորին
Եվ պաշտեցե՛ք,
Փառաբանությամբ երգեցե՛ք մեր Արքային,
Նոր երգ երգեցե՛ք:
Զի Ինքն է Տեր և Թագավոր երկրի վրա,
Երկինք, երկիր կցնծան Իր սուրբ անվամբ:
Փառաբանությամբ երգեցե՛ք մեր Թագավորին (2):

***
1. Օվսաննա՛ (3) ի բարձունս:
Օվսաննա՛ (3) ի բարձունս:
Փառաբանենք անունդ
Շնորհակալ սրտով,
Փառաբանենք Քո սուրբ անուն,
Օվսաննա՛ ի բարձունս:

2. Փա՛ռք Քեզ (3) բարձունքներում, Տե՛ր,
Փա՛ռք Քեզ (3) բարձունքներում, Տե՛ր,
Մենք օրհնում ենք Քեզ, Տե՛ր,
Մեր սրտի փառքերով,
Ալելուիա՛ Քեզ, Տե՛ր Աստված,
Փա՛ռք Քեզ, մեր Տեր Արքա:

3. Կօրհնենք Քեզ (2), թագավորաց Թագավոր:
Կօրհնենք Քեզ (2), թագավորաց Թագավոր:
Փառաբանենք անունդ
Շնորհակալ սրտով,
Փառաբանենք Քո սուրբ անուն,
Թագավորաց Թագավոր: